

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԵՐ ԿԵԼՆՔԻ ՅԱՆԵՐԻՑ

Զարմանալի անհեթեթութեան են հասած մեր ժամանակի բարոյական հասկացողութիւնները կեանքի բաղձաթիւ երևոյթների և մանաւանդ երկու սեռերի կենսակցութեան մասին: Քաղաքակիրթ կոչուած Եւրոպան շատ ընական է համարում ահագին խմբերով կանանց և նոյն իսկ փոքրահասակների վաճառումը, ժողովում է նրանց, յատուկ ստրկանոցներ է պահում ի վայելա ամուրիների և փշացած ամուսնացածների, վաճառքի առարկայ է դարձնում մարդ արարածի մարմինն ու խիղճը ամուսնացածների, կամ՝ աւելի ուղիղն ասած ընտանիքների բարոյականութիւնը պահպանելու համար, կրքի խնդրում մարդ-գաղանից մօր սիրտն ու զգացմունքը զաւակների և ամուսնու համար մաքուր պահպանելու նպատակաւ մի ահագին խումբ կանանց և օրիորդների, որոնք նոյն այդ մարդկանց զոհ են, դեղին տոմսակ է տալիս, մի անարգական կնիք դրոշմում իւր զոհերի ճակատին՝ զրկելով կանգնելու, ազատ-անկախ մարդ դառնալու իրաւունքից և երբէք չի մտածում նոյնանման տոմսակ տալ այն այր մարդկանց, որոնք բարոյապէս ընկած, սովորական այցելու են ստրկանոցների և դեղին տոմսակաւորների: Այն, եթէ մտնէր այդ միանգամայն արդարացի և հաւասարութեան գաղափարից բղիթող պահանջը, մենք ահանառեւ կլինէինք սքանչելի փոփոխութեան: Բայց բաւական չէ, որ մարդիկ այդ չեն անում, բաւական չէ, որ միայն կանանց մէջն են տեսնում շնացողներին, իսկ իրենք դառնում ըողորարկու և տրտնջացող, ոչ, նրանք սահմանում են օրէնքներ, տարօրինակ արդարագատութիւն և դա-

տում, դատում սառնասիրտ և անվրդով, առանց մաղաչաւի խղճի խայթն զգալու:

Նոյն իսկ մեր թեմական կոնսիստորիաների պրաքտիկայի մէջ կան շատ տարօրինակ երևոյթներ յանցաւոր հոգեւորականների վերաբերութեամբ:

Օրինակի համար. Աղէքսանդրապօլի գաւառում մի մանր գաւակների տէր այրի քահանան տեղական փոխանորդի կողմից համարւում է արժանի կարգալոյծ լինելու, Ղարաբաղի թեմական կոնսիստորիան մի և նոյն և աւելի վատ շնութեան համար (տես Արարատ № 5, պաշտօնական բաժնի վերջին կարգադրութիւն,) գատապարտում է ապաշխարութեան մի տարի ժամանակով — ճալէթի վանքում, մի ուրիշին նոյնատեսակ՝ բայց աւելի ծածուկ կատարած յանցանքի համար, վեց՝ — ամսուայ ապաշխարութեան, իսկ կային և կան բազմաթիւ անձինք նոյն և առաւել վատ յանցանքներում, բայց ի պատուի, զարգարեալ և պաճուճեալ, իսկ եթէ վերցնենք աշխարհական դասը, բայց այնտեղ դատն ու պատիժն իսկի գոյութիւն անգամ չունին այս խնդրում:

Ի՞նչ ձևով մարդիկ յոյս ունին դուրս գալու այդ հակասական ծանր, անարդար և անբնական դրութիւնից: Ինչո՞ւն են դառնում չարեաց արմատը և մարդկանց բարոյական այդ ծանր վէրքեր բուժելու միջոցները:

Այս մասին գլխաւորապէս երեք հայեացք կայ. —

Մի մասն ընդունում է, որ այդ բանի առաջը կառնի մի միայն անսահման ազատութիւնն ու մերկութեան կուլտը, երբ մարդիկ չեն քաշուիլ մերկ լինելուց, մերկ երևալուց, մերկ պարելուց և սեռերի ներկայ առանձնացած կեանքը ոչնչացնելուց: Այս տեսակ կարծիքի են գլխաւորապէս հրապարակախօսները՝ մանաւանդ ֆրանսիացում, որոնց արձագանք տուաւ «Русь» թերթի խմբագրութիւնը:

Երկրորդն է դարձեալ ֆրանսիական վիպագրող հանգուցեալ Զօլան, որ իւր վերջին աշխատութեանց մէջ յատկապէս այն միտքն արծարծեց, որ մարդիկ ստեղծուած են բազմանալու և բնութեան այդ նպատակի դէմ

մեղանշողներն անխուսափելիօրէն պատժուում են և ոչնչանում՝ ոչ մի մխիթարութիւն չգտնելով շուայլ և հարուստ կեանքի ու կենցաղավարութեան մէջ։ (Տես բեղմնաւորութիւն «Fecundité» աշխատութիւնը)։

Ընտանիք կազմելու համար Զօլան պահանջում է, որ երկու սեռի մանուկներն իրար հետ մեծանան միշտ և միասնան օրին որ կը սիրեն։ Այս մտքով նա մի քանի անգամ ոգևորուած նկարագրում է «Աշխատանք» կոչուած հեղինակութեան մէջ հասարակաց այգին, որտեղ հաւասարութեան սկզբունքով հիմնուած աշխատանքի ու կապիտալի հաւասարագօր սերնդի օրդիք ազատ ապրում և միանում են բազմաթիւ նորանոր ընտանիքներ կազմելով, աճելով ու զօրանալով, մինչդեռ միւս կողմից հետզհետէ դատարկ է մնում քրիստոնէական տաճարն այցելուներից, քահանան անգործ՝ առանց ծխականների և յուսահատ Զօլան այսպիսով ցանկանում է ասել, որ առանց քրիստոնէական սկզբունքների, առանց եկեղեցու և եկեղեցական ամուսնութեան՝ ստացուածքի և գոյքի, աշխատանքի և դրամագլխի հաւասարութիւնը կարող է և միակ միջոցն է մաքուր և բարոյական ընտանիք ստեղծելու և վերջ տալու ներկայ անկարգ—անբարոյական կեանքին։ Որ ընդհանուր հաւասարութեան սկզբունքն ահագին նշանակութիւն կարող է ունենալ մարդկանց բարոյականի համար, դրանում կասկած չկայ, բայց որ դրա համար գերադոյն և միակն է քրիստոնէական իդէալը և նրանից բարձր ու վսեմ բան չկայ և չի կարող լինել, դրա մասին Զօլան էլ չի վիճում և նոյն այդ հաւասարութեան սկզբունքով միայն նա ցանկանում և հնարաւոր է համարում այդ իդէալին հասնելը։

Երրորդ ուղղութիւնն կարելի է կոչել նշանաւոր բանաստեղծ և բարոյախօս Լ. Ն. Տօլստոյի կարծիքն այդ մասին։

Նա համոզուած է, որ ամենավսեմն է Աւետարանի բարոյական օրէնքը, որ մարդիկ բարոյական կատարելութեան հասնելու համար՝ պէտք է աշխատեն ապրել ըստ

Աւետարանի, որ եկեղեցական ամուսնութիւնն այդ բանի համար անբաւարար է և որ Փրկիչն ամուսնութեան խորհուրդը չի հաստատել: Նա իւր «Կրէյցերի Սօնատ» աշխատութեան մէջ գեղարուեստաբար, իբրեւ խորունկ հոգեբան և բանաստեղծ փիլիսոփայ, պատկերացնելով ներկայ կեանքն առհասարակ և ընտանեկան ու հասարակական բարոյականութիւնը, խիտ, շատ խիտ և պայծառ ներկերով տալով մեր հասարակական բարոյականութեան պատկերը, ցոյց տալով թէ ինչ պէտք է լինի քրիստոնէի իղէալը, այդ նոյն «Կրէյցերի Սօնատ» աշխատութեան վերջաբանի մէջ ի միջի այլոց գրում է հետեւեալը. —

«Մեր հասարակութեան մէջ, շնորհիւ այն հայեացքի, որ սիրային յարաբերութիւնները ոչ թէ առողջութեան անհրաժեշտ պայման են կամ վայելչութիւն, այլ կեանքի բանաստեղծական վսեմ երջանկութիւն, ամուսնական անհաւատարմութիւնը հասարակութեան բոլոր խաւերում դարձել է ամենասովորական երևոյթ:»

Ես կարծում եմ, որ այդ լաւ չէ, իսկ սրանից հետեւող եզրակացութիւնն այն է, որ այդ չպէտք է անել:

Իսկ այդ չանելու համար հարկաւոր է փոխել մարմնական սիրոյ մասին գոյութիւն ունեցող հայեացքը, որպէս զի տղամարդիկ և կանայք կրթուեն տներում և հասարակական կարծիքով այնպէս, որ նրանք ամուսնութիւնից առաջ և յետոյ սիրահարուելու և նրա հետ կապուած մարմնական սիրոյ—չքնայեն իբրեւ մի բանաստեղծական վսեմ դրութեան վրայ, ինչպէս որ նայում են այժմս, այլ իբրեւ մարդուս ստորացնող անասնական դրութեան վրայ, և որ ամուսնութեան ժամանակ տուած հաւատարմութեան խոստման խախտումը հասարակական կարծիքով պատժուի դոնէ այնպէս, ինչպէս պատժում են դրամական պարտաւորութիւնների խախտումները և առևտրական խաբէութիւնները. և ոչ թէ փառաբանութիւն, ինչպէս այդ անում են այժմս վէպերում, ոտանաւորներում, երգերում, օպերաներում և այլն»:

Ապա Տօլստոյն ասում է, որ յղութեան ժամանակ

պէտք է ժուժկալ լինել, զաւակներ չունենալու համար տարածուած միջոցները ոչնչացնել, որ որդեծնութիւնով է միայն արդարացում ամուսնական կենցաղավարութիւնը և հէնց այդ է կենակցութեան նպատակը: Որ որոշ ցանկացած թուով զաւակներ ունենալու շնորհիւ մարդու որդիք դաստիարակում են անասունների որդւոց պէս, որ նրանց ծնողների գլխաւոր հոգսը ոչ թէ նրանցից գիտութեան և մարդկութեան մշակներ պատրաստելու մէջն է, այլ լաւ սնուցանելու, գիրացնելու, մաքուր, սպիտակ, փափուկ և գեղեցիկ դարձնելու մէջ: Որ հէնց այդ է պատճառը, որ կրքերն անբնական կերպով շուտ են զարգանում, որ շուտ է երեան գալիս զգայականութիւնը և սոսկալի տանջանքների պատճառ դառնում դեռ պատանեկութեան ժամանակ, որ այդ բանին են նպաստում զարդերը, ներկայ ընթերցանութիւնը, տեսարանները, երաժշտութիւնը, պարերը, քաղցր սնունդը, կեանքի ամբողջ սարք ու կարգը, պատկերներն ու վէպերը, վիպասանութիւններն ու բանաստեղծութիւնները և աւելի ու աւելի բորբոքում այդ զգայականութիւնը:

Որ պէտք է դադարել մարդկային զաւակներին անասունների որդւոց նման մեծացնելուց և բացի գեղեցիկ և դժուած մարմնից՝ դնել ուրիշ նպատակներ:

Որ սիրահարութիւնը չը պէտք է բարձրագոյն բանաստեղծական նպատակ համարել և այդ բանի համար չը պէտք է սպառել մարդկային ամենալաւ ուժերը, որովհետեւ դա ոչ միայն անպտուղ, այլ փնասակար աշխատանք է և արգելք մարդկութեան՝ հայրենիքին և Աստուծուն ծառայելու, որ դրանից է առաջ գալիս մեր կեանքի շուրջութեան մեծագոյն մասը և մեր կանանց մէջ տարածուած տգեղ սովորութիւնը՝ կանխապէս ծանօթ և փշաջած կանանցից փոխ առնելու այն շուրջ շրթերի ձևերը, որոնցով աւելի գրաւիչ և կիրքը գրգռելու համար հանդէս են դրում մարմնի զանազան մասերը, որ այդ վատ է և վատ նրա համար, որ դառնում է կեանքի նպատակ և յետ մղում մարդկային ամենավսեմ պարտաւորու-

թիւններ և իդէալներ:

Ապա Տօլստոյն ընդունում է, որ մարդիկ յառաջադիմութեան հետ հետզհետէ սանձարձակութիւնից դիմում են աւելի և աւելի ողջախոհութեան, որ մի միայն քրիստոնէական բարոյականութեան հետ է հաշտւում մեր իսիդճը և միշտ դատապարտում է անբարոյականութիւնն ու քաջալերում ու դնահատում ողջախոհութիւնը, որ այդ պահանջներն Աւետարանի վարդապետութեան անխուսափելի եզրակացութիւններ են, վարդապետութեան, որը մենք դաւանում ենք, կամ գոնէ անգիտակցաբար ընդունում մեր բարոյական հասկացողութեան հիմունք: Համեմատելով քրիստոնէական վարդապետութիւնը ուրիշ կրօնների հետ և ցոյց տալով առաջնի գերազանցութիւնը, նա ասում է հետեւեալը.—

«Քրիստոնէական առանձնայատկութիւնները չը հասկացող մարդիկ, սովոր լինելով արտաքին ուսմունքների և կամենալով արդար զգալ իրենց՝ ինչպէս այդ զգում է մովսիսական փարիսեցին, քրիստոնէական ոգուն հակառակ՝ նրա տառերից ստեղծել, շինել են վարդապետութեան արտաքին կանոններ և այդ վարդապետութեամբ կեղծել իդէալի քրիստոնէական ճշմարիտ վարդապետութիւնը:

Որովհետեւ ճշմարիտ քրիստոնէական վարդապետութեան մէջ ոչ մի հիւր չկայ ամիւսնութիւն հաստատելու? ուստի առաջ է եկել այն, որ մեր աշխարհի մարդիկ մի ամիից հեռացել են և միւսին չեն մօտեցել, այսինքն չեն հաւատում ամուսնութեան վերաբերութեամբ եղած որոշումներին և մի և նոյն ժամանակ իրենց առաջ չըտեսնելով Քրիստոսի իդէալը՝ կատարեալ ողջախոհութեան ձրգտելու, ամուսնութեան վերաբերութեամբ մնում են առանց որ և է ձեռնարկի:

Աւետարանի մէջ չէ որ պարզ և առանց որ և է մեկնութեան տեղ թողնելու՝ ասուած է նախ,—որ ամուսնացածը չը բաժանուի կնոջից մի ուրիշին առնելու համար, այլ պէտք է ազրի, որի հետ որ միացել է. (Մատթէոս

գլ. V. 31, 32. XIX. 8.) երկրորդ որ մարդուս համար՝ լինի նա ամուրի թէ ամուսնացած, մեղք է նայել կանանց՝ որպէս տարփանքի առարկաներին. (Մատթէոս գլ. V. 28 և 29.) և երրորդ, որ ամուսնացածին լաւ կլինէր, եթէ բոլորովին չամուսնանար, այսինքն լինէր բոլորովին ողջախոհ. (Մատթէոս XIX. 10—12):

Շատ շատերի համար այս մտքերը տարօրինակ և հակասական են, բայց ոչ թէ իրար, այլ մեր ամբողջ կեանքին. և ակամայից հարց է ծագում. ո՞վ է արդարեւ այդ մտքերը, թէ միլիոնաւոր մարդկանց և իմ կեանքը՝ ես նոյնը զգացի և ամենամեծ ուժով, երբ հասնում էի այն համոզմունքների, որ այժմս արտայայտում եմ: Ես երբէք չէի սպասում, որ մտքերիս ընթացքն ինձ այդ տեղ կըհասցնի: Ես սարսափում էի եզրակացութիւններիցս, չէի ուզում հաւատ ընծայել նրանց, բայց չը հաւատալու հնար չկար:

Այնուհետեւ ճորտոյն առաջ է բերում մարդկանց սովորական բանաձեւը, որ քրիստոնէական իդէալը անհասանելի է նրանց համար, որ այդ բանի մասին կարելի է միայն երազել, որ նա կեանքի համար անդործնական է, որ մարդիկ պահանջում են ոչ թէ իդէալ, այլ կանոն՝ ձեռնարկ, որը նրանց ուժերին համապատասխան լինէր և մեր հասարակութեան բարոյական ոյժերի միջակ մակերևոյթին համեմատ, որ նրանք պահանջում են եկեղեցական ազնիւ ամուսնութիւն, որի ժամանակ ամուսնացողներից մինը, ինչպէս մեզ մօտ տղամարդը, արդէն կենակցել է բազմաթիւ կանանց հետ. կամ ամուսնութիւն՝ ապահարդանի հնարաւորութեամբ, կամ քաղաքացիական ամուսնութիւն...—այսպիսով ինչու չը հասնել անառակահոցների:

—Ասում են, սա փողոցային շնութիւնից լաւ է.

«Հէնց դրանումն է դժբախտութիւնը, որ մեր թուլութեան համաձայն թոյլատրելով մեզ իդէալի ստորացումը, չի կարելի դռնել այն սահմանը, որտեղ պէտք է կանգ առնել»:

Այնուհետև յարգելի փիլիսոփայական գերազանց ընդունելով քրիստոնէական իդէալը կատարելութեան համար ընդհանրապէս և ողջախոհութեան վերաբերութեամբ մասնաւորապէս, որոշում է, թէ ինչ պէտք է անի մարդն իւր ամենափոքրիկ հասակից մինչև ամուսնութիւնը, ամուսնութեան ընթացքում—մինչև մահը և կրկնում է այն, ինչ որ մաշտոցի ամուսնական խրատն է:

«Եթէ մենք ասում ենք, որ պէտք է ունենալ աւելի իրադործելի կանոններ քան քրիստոնէական իդէալը, ապա թէ ոչ մենք այդ իդէալին չը հասած կընկնենք անառակութեան մէջ, դորանով մենք այն չենք ասում, որ մեզ համար շատ բարձր է Քրիստոսի իդէալը, այլ միայն ցոյց ենք տալիս այն, որ մենք նրան չենք հաւատում և չենք ուզում մեր վարմունքները նրանով բնորոշել: Երբ ասում ենք, թէ միտնգամ ընկնելով, մենք կը գլորուենք անառակութեան մէջ, չէ՞ որ մենք դրանով իսկապէս այն ենք ասում, որ անկումն անհաւասարի հետ մեղք չէ, այլ զուարճութիւն, ոգևորութեան արգիւնք, որը չը պէտք է ամուսնութիւն կոչուած քայլով ուղղել: Եթէ մենք հասկանայինք, որ անկումն մեղք է և այդ կարելի է և պէտք է անբաւարարի ամուսնութեամբ քաւել՝ միացնելով այն գործունէութիւնը, որը հետևում է ամուսնութիւնից ծնուած զաւակների դաստիարակութեան, այդ դէպքում անկումն երբեք անառակութեան մէջ ընկնելու պատճառ չէր դառնայ:

Ընդունեցէք իբրև իդէալ միայն ողջախոհութիւնը, ընդունեցէք, որ իւրաքանչիւր անկումն ով և ում հետ էլ լինի՝ միակ և անխզելի ամուսնութիւն է ամբողջ կեանքի համար և պարզ կլինի, որ Քրիստոսի տուած ուղեցոյցը (ձեռնարկը) ոչ թէ բաւական է, այլ և միակ հնարաւորը:

Իդէալի քրիստոնէական վարդապետութիւնը այն միակ վարդապետութիւնն է, որը կարող է զեկաւար լինել մարդկութեան: Ձի կարելի, չը պէտք է փոխել Քրիստոսի իդէալն արտաքին կանոններով, այլ ամուր պէտք է բռնել այդ իդէալը մեր առաջ իւր ամբողջ մաքրութեամբ և որ

գլխաւորն է՝—հաւատալ նրան:

Ափի մօտ լողացողին կարելի է ասել. — այս բարձրութեան, հրուանդանի, կամ այս ինչ աշտարակի ուղղութիւնը բռնիր և այլն:

Բայց գալիս է ժամանակ, երբ լողորդներն հեռացել են ափից և նրանց իբրև ուղեցոյց կարող են ծառայել մի միայն անհասանելի լուսաւորներն ու կողմնացոյցը, որոնք ուղղութիւն են ցոյց տալիս: Թէ մէկը և թէ միւսը մեզ է տուած:

Այս էլ Տօլստոյի կարծիքն է ամուսնութեան մասին:

Զարմանալին այս է, որ թէ Զօլան և թէ Տօլստոյն ամուսնալուծութիւն ասած բանը չեն ընդունում: Զօլան իւր «Աշխատանքի» մէջ այդպիսի միտքն անգամ չի արծարծել և ինչպէս վերը յիշեցինք, ընտանեկան կեանքի ներկայ բացասական երևոյթների առաջն առնելու ամենաուժեղ միջոցն է համարում հաւասարութիւնը: Իսկ Տօլստոյն գալիս է յայտարարելու ի լուր աշխարհի, որ ինքը գտել է Քրիստոսի տուած իդէալը, ըմբռնել այն, ինչ որ ոչ ոք չի կարողացել և որ եկեղեցական ամուսնութիւնն է, որ նսեմացնում է կամ հակառակ է գնում այդ իդէալին, որ Քրիստոս ամուսնութեան խորհուրդը չի հաստատել: Յարգելի մեծ փիլիսոփայի և բարոյախօսի սխալը կայանում է նրանում, որ նա չը գիտէ, կամ գիտե՞նալ չի ուզում, որ եկեղեցական ամուսնութիւնը սկիզբն է Քրիստոսի իդէալին հասնելու շաւղի, որ այդ տեղից է սկսւում առաջին աստիճանը:

Ոչ ոք չի կարող վիճել և ասել, որ Քրիստոս ամուսնութեան օրէնքը չի հաստատել, որ նա չի գծել ողջախորհութեան իդէալը և ընտանիքի անդամների փոխադարձ պարտաւորութիւնների սահմանը: Իսկ եթէ այդ արել է, ուրեմն և հաստատել է ամուսնութեան խորհուրդը և եկեղեցական ամուսնութիւնն երբէք ուրիշ բան չէ, քան քրիստոսագիր օրէնքի բարձրաձայն յայտարարութիւնը ամուսնացողներին և նրանց շրջապատողներին, և նախապտեղծ մարդուն տրուած օրհնութեան կրկնութիւնը: Վերև

յառաջ բերուած ամուսնական խրատից պարզ երևում է, թէ հրապիսի ճշտութեամբ է ըմբռնել և գործադրել Քրիստոսի տուած օրէնքն հաւատացեալների մէջ և հրապիսի հսկող և պահապան է եղել եկեղեցին ընտանեկան սըրբութեան: Իսկ որ Քրիստոսն ինքը չի գրել և կազմել մաշտոցն ու շարայարել աղօթքներն ու շարականները, դրանում կասկած չկայ և այդ յայտնի է իւրաքանչիւր քրիստոնէի: Հապա ուրեմն որտեղ է չարեաց արմատը, ինչո՞ւ է ընկնում ընտանեկան բարոյականութիւնը և հետզհետէ աճում ամուսնալուծութիւն խնդրողների թիւը:

Դորա պատճառները շատ շատ են, բայց նրանցից մեծ մասը կարելի է հէնց այժմեանից ոչնչացնել:

Առաջին տեղը բռնում է դաստիարակութիւնն ու ուսումը, որը պէտք է փոխել հիմնովին՝ պատրաստելով մարդկանց ոչ թէ եսի և կրքի, ոչ թէ շուայլութեան և զեղխութեան համար, այլ Քրիստոսի տուած իդէալին ծառայելու, այլոց ծառայելու և կատարեալ լինելու համար: Երկրորդ, պէտք է խստիւ արգելել որոշ հատակից յետոյ ամուրի մնալը և հարկ առնել այդպիսիներից բազմանդամ ընտանիք և դաւակներ ունեցող չքաւորների օգտին:

Նոյնպիսի պատուաւոր տոմսակ տալ և յանցաւոր այր մարդկանց, ինչպիսիք որ այժմ տրւում են թշուառ կանանց:

Մտցնել Տօլստոյի յիշած պատիժը ամուսնական ուխտը դրժողների համար: Քաղաքացիական օրէնսդրութիւնն համապատասխան դարձնել Քրիստոսի գծած օրէնքի պահանջներին:


Արգելել այրի մնալը որոշ ժամանակամիջոցից յետոյ բոլոր դասակարգերին, Պսակի եկեղեցական խորհուրդը կատարելիս հասկացնել Աւետարանի որոշած պարտաւորութիւնները պսակուողներին և չրջապատողներին և հասարակական կազմով հսկել նրա անթերի իրագործման: Պատանեկական հասակից հասկացնել Քրիստոսի տուած իդէալի վեհութիւնն ու մեծութիւնը և ըմբռնել տալ

պսակի խորհրդի այդ ամենաէական մասը:

Այս անելուց յետոյ՝ մենք հաւատացած ենք, որ բացի յիշածս երկու դէպքերից՝ անյայտ բացակայելուց և իրաւագուրկ մշտնջենական աքսորից՝ ուրիշ դէպքեր չենք տեսնալ ամուսնութիւնը լուծելու. մի բան, որ ըստ Աւետարանի մեր իրաւունքից միանգամայն վեր է:

Կարծում ենք, որ այս ճանապարհով միայն մենք կը վերադառնանք առողջ և ուժեղ ընտանիքի, անձնուէր ծնողական յարկի, մի ժողովրդի անմահութեան ամենաուժեղ հիմունքի և առաջնակարգ պայմանի: Հակառակ դէպքում մենք ամուսնաթողներից կունենանք ամենօրեայ ամուսնաթողներ, աւազի վերայ հիմնած ընտանեկան կեանքն ու ձևական—անուանական ծնողներ, որոնք անընդունակ կլինեն Քրիստոսի իդէալն ըմբռնելու, և զուրկ նրան ձգտելու, նրանով առաջնորդուելու կարողութիւնից, որի հետեանքը մի միայն գերեզման է, ազգային գերեզման և ուրիշ ոչինչ:

Ե. Ժ. Վ. Մ.



ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱԻՈՐԸ

Ղուկ. ԺԸ. 9—15.

«Փորձեա զիս Աստուած և ծանիր զսիրտ իմ, քննեա զիս և ծանիր զչաւիղս իմ, և տես թէ իցեն անօրէնութիւնք ի ճանապարհս իմ, և առաջնորդեա ինձ ի ճանապարհս քո յաւիտենիցս: Սաղմ. ՃԼԸ. 23—24:

Քրիստոս այս առակն ասել է աչքի առաջ ունենալով այն մարդոց, որոնք իրենք են իրենց չափում և համեատ ու արդար գտնում, իսկ ուրիշներին արհամարհում: Այդ